Գրավի առարկան գնահատվում և ապահովագրվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից /ցանկը տես այստեղ/:

Օժանդակ ծառայություններից օգտվելու գնային միջակայքը հետևյալն է՝

- գույքի գնահատում՝ սկսած 15 000 ՀՀ դրամից
- գույքի ապահովագրություն՝ 0.2% գնահատված արժեքից կամ վարկի գումարից /հաճախորդի ցանկությամբ/
- ՀՀ դրամ
- նոտարական ծառայությունների վճար՝ համաձայն նոտարիատի մասին օրենքի
- գույքի պետական գրանցման վճար՝ համաձայն կադաստրի սակագների

Սպառողի համար վարկի հասանելիությունը սահմանափակող այլ պայմաններ չկան:

Վարկի տրամադրման դրական գործոններն են հաճախորդի վարկունակությունը, բացասական վարկային պատմության բացակայությունը, գրավի առարկայի որակը և այլն:

Վարկի մերժման գործոններն են հաճախորդի եկամուտների անբավարար լինելը, բացասական վարկային պատմության առկայությունը, ներկայացված տեղեկատվության կամ փաստաթղթային փաթեթի թերի կամ անարժանահավատ լինելը և այլն: